

ԱԼԲԵՐՏ
ՄԱԿԱՐՅԱՆ

Խ Ի Կ Մ Ի

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ՏԻՐՈՒՅԹՆԵՐՈՒՄ

Բ Ա Ձ Մ Ա Վ Ե Վ

Բ Ա Ր Յ Ա Ն Ե Ն Ա Ս Ե Ն Ի Ն

ԱԼԲԵՐՏ ՄԱԿԱՐՅԱՆ

**ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ՏԻՐՈՒՅԹՆԵՐՈՒՄ**



ՀՏԴ 82.0
ԳՄԴ 83.3(0)
Մ 180

**Հրատարակության և երաշխավորել ԵՊՀ-ի հայ
բանասիրության ֆակուլտետի գիտական խորհուրդը:**

Խմբագիր՝ Տաթևիկ Մերջանյան
բ. գ. թ.

Գրախոսներ՝ Վազգեն Սաֆարյան
բ. գ. դ., պրոֆեսոր
Աշխեն Զրբաշյան
բ. գ. թ., դոցենտ

Ա. Ա. ՄԱԿԱՐՅԱՆ
Մ 180 Գրականագիտության տիրույթներում, Եր.,
«Արմավ» հրատ., 2021, 292 էջ:

ՀՏԴ 82.0
ԳՄԴ 83.3(0)

Գիտական հոդվածների և հրապարակումների այս ժողովածուն պարունակում է հեղինակի՝ տարբեր տարիներին գիտական զանազան պարբերականներում լույս տեսած գրականագիտական ուսումնասիրությունները: Դրանք նվիրված են հայ գրականության ուշարժան երևույթներին, գրական հետաքրքիր առնչություններին, նաև ուսուցման որոշ հարցադրումների, և ամբողջականության մեջ ավելի տեսանելի են դառնում գրական տարաբնույթ երևույթների ընկալումներն ու դրանց արդիականությունը:

Նախատեսված է գրականագետների, գրականության տեսաբանների, բանասերների և ընդհանրապես գրականությամբ հետաքրքրվող ընթերցողների համար:

ISBN 978-9939-78-120-4

© Մակարյան Ալբերտ, 2021
© Արմավ, 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«Վերք Հայաստանի...» վեպի դասավանդման մի քանի հարցեր	4
Ղևոնդ Ալիշան. մարդը և բանաստեղծը	11
«Նոճյաց տղայի» առասպելը (Պետրոս Դուրյանի ծննդյան 160-ամյակի առթիվ)	40
Խորեն Գալֆայան (Նար-Պեյ). մարդը և կատակերգակը	55
Հակոբ Պարոնյանի «Ազգային ջոջերը» և ֆրանսիական «Պոլիշինել» երգիծաթերթը	82
Հակոբ Պարոնյանի «Պաղտասար աղբար» կատակերգության առաջին գրախոսության իմացական արժեքը	91
Բանասիրական մի ճշգրտում «Պաղտասար աղբար»-ի առիթով	116
Երվանդ Օտյանի «Մեր երեսփոխանները» պատմական լույսի ներքո	126
Թագուհի Շիշմանյան՝ արևմտահայ գրականության կորուսյալ ասուլյը	134
Չապել Եսայանի «Սիլիհտարի պարտեզները»	183
Դերենիկ Դեմիրճյան. «Ավելորդը» (դասավանդման մի քանի խնդիրներ)	226
Հրանտ Թամրազյան	252
Տրոհված միջուկի հայտնությունը	281

«ՎԵՐՋ ՀԱՅԱՍՏԱՆԻ...» ՎԵՊԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Խաչատուր Աբովյանի «Վերջ Հայաստանի. Ողբ հայրենասիրի» վեպի դասավանդումը գրեթե միշտ առաջացնում է դժվարություններ: Դա ամենից առաջ կապված է պատումի ու ժանրային յուրահատկության, այն է՝ ժողովրդական վեպի տեսակի, կերպարային համակարգի, ոճի և, իհարկե, նոր ձևավորվող գրական աշխարհաբարի բարբառախառն շերտերի առկայության հետ: Այդ ամենին զրականագիտությունն անդրադարձել է բազմիցս. գրվել են ծանրակշիռ մենագրություններ, լրջմիտ աշխատություններ: Իսկ իմ նպատակն է ուշադրություն հրավիրել կոթողային այդ երկի դասավանդման որոշ առանձնահատկությունների վրա:

Խոսելով «Վերջ Հայաստանի...» վեպի մասին՝ ամենից առաջ ծագում է խորագրի խորհուրդը. այն իմաստաբանորեն բավականին ծանրաբեռնված է՝ **ինչո՞ւ Վերջ, ինչո՞ւ ողբ:**

Նախ՝ վերջը. բնավ զանց չառնելով պարսկական լծի տակ հեծող հայոց մի սովոր հատվածի տևական անլուր տառապանքի գիտակցության հեղինակային հասկանալի նկատումները՝ վերջի իմաստաբանական հատկանիշները պետք է փնտրել նաև ուրիշ շերտերում՝ տվյալ շրջանում հերոսական ոգու՝ հայոց մեջ դեռևս ընդհանրական չլինելու հանգամանքի, քաղաքական կողմնորոշման հետևանքով ծայր առած հիասթափությունների և, իհարկե, Հայաստանի արևմտյան հատվածի սրտակեղեք ավերումների ու մշուշոտ գալիքի հետ:

Վերջը նաև հեղինակի անձնական ցավի ցուցիչն է: Վերնագիր դուրս բերված այս բառը հեղինակին կապում է իր վեպի, այնտեղ արծարծվող արդիական և իրեն հուզող խնդիրների հետ: Բացի այդ՝ Աբովյանն ընթերցողին քողարկված հուշում է, որ ներկայացվող տեքստը հոգեբանորեն խորապես գիտակցված հեղինակային աշխատանքի արգասիք է:

Նշյալ հանգամանքներից առաջինի հայտնաբերումն ու վեր-

հանումը պատկանում է Միք. Նալբանդյանին: Հենց այս երևելի մտածողն է, որ «Մեռելախարցուկ» անավարտ վեպի (1859) տողատակի ծանոթագրություններում առաջին անգամ բացահայտել է «Վերքի...» գաղտնիքներից մեկը, այն է՝ Աղասու և Նրա ընկերների հերոսական ոգու եզակի, ոչ ընդհանրական լինելը հայոց համար. «Նա (Աբովյանը - Ալ. Մ.) *ցույց է տալիս Աղասու ընկերներով, թե ո՛չ բոլորովին սառել է հայկական արյունը Հայաստանի զավակների երակներում, ցույց է տալիս, թե մի հերոսի հրավեր, ազգի հրավույնքների, կրոնի և ազատության անարգվելու վրեժը մի թշնամուց հանելու համար, դեռևս տեղ գտանում է ազգի երիտասարդների սրտի մեջ: Ցույց է տալիս մեզ ազգի ընդհանուրի վիատյալ և հուսահատ դրութենից հառաջացած սառնությունը դեպի Աղասու ընկերքը, Նոցա կիսասիրտ կանացի ցավակցությունը այս կտրիճներին, որով հասկացնում է Աբովյանը, թե Աղասու ընկերների հոգին ընդհանրական չէ բոլոր ազգին, թե այս ջերմարյուն տղամարդիկը շրջապատված էին սառնարյուն մարդերից, որոնց աչքում ամենայն բարոյական խնդիր կորուսել էր յուր արժանավորությունը, և որոնց միակ քաջությունը ամփոփվում էր այն բանի մեջ, որ կարող էին լալ, ողբալ և մորմոքվիլ, առանց որոնելու այդ դրութենից դուրս գալու հնարը»¹: Ուրիշ խոսքով՝ թեև հայ ժողովուրդը դուրս էր եկել իր Նոր ծաղկումի շրջանը, այնուամենայնիվ առջևում դեռ կային չլուծված բազմաթիվ խնդիրներ, իսկ հերոսները սակավ էին: Ինչպես տեսնում ենք, Միք. Նալբանդյանը Աբովյանի ստեղծագործության վերնագիրը բացատրում է՝ ելնելով վեպի «Ներսից», այն է՝ կերպարային համակարգից, նրանց միջանձնային հարաբերություններից:*

Վեպի խորագրի իմաստաբանական հաջորդ ենթաշերտը կապված է երկրի քաղաքական կողմնորոշման լիովին չարդարացվելու հետ: Այս հարցադրումը, անշուշտ, կարող է առաջացնել ինչ-ինչ տարակույսներ. չէ՞ որ 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի հետևանքով Հայաստանի արևելյան հատվածը միացվել էր Ռուսաստանին ու փաստորեն փրկվել ֆիզիկական բնաջնջման սարսափից. ասել է թե՛ իրականացել էր հայոց վա-

¹ Նալբանդյան Միքայել, Երկերի լիակ. ժող. վեց հատորով, հ. 1, Երևան, 1979, էջ 311-312:

ղեմի երազանքը: Այսօր էլ շատ սրտառու է հնչում հայոց ազատագրության հույսերի՝ դարերի խորքում հյուսված լեգենդը՝ մեջբերված Իսրայել Օրոն՝ Պետրոս Մեծին 1701-ին հասցեագրված լատիներեն զեկուցագրից. «Կանխագուշակել են մարզարենները, թե ժամանակներ անց անօրենները չափից ավելի պիտի մոլեգնեն՝ հարկադրելով քրիստոնյաներին ընդունելու իրենց նողկալի կրոնը, և այդ ժամանակ Մոսկովյան օգոստափառ տանից պիտի գա ոմն մեծ իշխան, շատ ավելի քաջարի, քան Ալեքսանդր Մեծը, որն իր ձեռքը պիտի առնի Հայոց թագավորությունը և ազատի քրիստոնյաներին»²:

Այդ հանգամանքը, ինչ խոսք, քաջ գիտակցում էր Աբովյանը, և վեպի հյուսվածքում գերակայող է ռուսասիրության ու Ռուսաստանին երախտագետ լինելու գաղափարը: «Ընչանք մեռնիք ո՛չ, որ մեկ օր էլ էսպես՝ էլով, գյուղով, ռուսի ձեռի տակին նստիք, քեֆ անենք», «Տե՛ր աստված, դու մեր Ռուս թագավորի սիրտը ռահմ քցես, որ գա, մեզ ազատի. ընչանք մահ մի՛ տար մեզ, մինչև նրանց երեսը տեսնիք»³, - անկեղծանում են քանաքեռցիները: Ազդեցիկ են նաև Երևանի բերդի գրավման հեղինակային հիշատակումները. «Սալդաթի տուտը հենց բերդը մտավ թե չէ՛, հազար տեղից, հազար փանջարից լացն ու արտասուները էլ չէին թողում, որ մարդու բերան բաց ըլի: Բայց ով սիրտ ուներ, լավ էր տեսնում, որ է՛ն ձեռներն, է՛ն աչքերը, որ քարացել, սառել, երկնքին էին մտիկ տալիս, առանց խոսքի էլ ասում էին, որ դժոխքի քանդվիլը մեղավորների համար էս գիկը չէ՛ր ունենալ, ինչպես Երևանու բերդի առնիլը հայերի համար» (287-288):

Այս և համանման ուրիշ հատվածները, հարկավ, հայության պատմական տրամադրությունների ճշմարտացի վերարտադրություններն են: Դա անժխտելի է: Ուշադիր լինելու դեպքում, սակայն, նկատում ենք, որ վեպը գրելով 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմից ուղիղ 13 տարի հետո (1841-ի փետրվար-հոկտեմբեր)՝ Աբովյանը վաղուց արդեն նկատել էր կայսրության

² «Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միանալու արձագանքները հայ գրականության մեջ» (աշխատասիրությամբ Պ. Հակոբյանի), Երևան, 1978, էջ 3:

³ **Աբովյան Խաչատուր**, Վերջ Հայաստանի. Որք հայրենասիրի, Երևան, 1981, էջ 84: Այս հրատարակությունից մեջբերվող հատվածների էջերն այսուհետև կնշվեն համապատասխան տեղում՝ փակագծի մեջ:

վարած հայահալած, գաղութատիրական, այլ կերպ՝ սպիտակ ջարդի քաղաքականությունը և խորապես հիասթափված էր «*հյուսիսի տիրակալից*»: Դա էլ իր հերթին մի նոր վերջ էր՝ ծայր առած նոր իրադրություններից, կարգերից ու օրենքներից... Արդ, ո՞րն էր ելքը: Նշելի է, որ որքան էլ հիասթափված՝ Աբովյանը չէր կեղծում. վիպական հյուսվածքում շարունակ դրվատանքի խոսք ասելով Ռուսաստանի մասին՝ անաչառորեն արձանագրում էր պատմական փաստը. քրիստոնյա հզոր հարևանը հայ մարդկանց հոգևաբեկ հայացքներում բացում էր հույսի նոր հորիզոններ, փրկում ֆիզիկական ոչնչացման վտանգից: Բայց արդյոք այդքա՞նը՝ բնավ. **լայնախոհ մտածողի համար Ռուսաստանը բոլոր դեպքերում մնում է իբրև միջոց, այլ ոչ նպատակ. վերջինս գալիքում էր՝ Հայոց աշխարհի ազատ ու անկախ գոյության հեռանկարում**: Ահա այստեղից էլ ծնվում է իմաստալից հորդորապատգամը՝ ուղղված հայ սերունդներին.

*... Խելքդ ժողովես, լինիս կտրիճ հայ,
Ռուսաց հզոր, քաջ ձեռի տակին
Փոքր դինջանաս ու քո աշխարքին
Մուղայիթ կենաս, արյունդ թափես,
Քո ազգը պահես, քեզ անուն ճարես* (261):

Խորագրային վերքի իմաստաբանական հաջորդ ենթաշերտը վերաբերում է հեռուններում՝ վաչկատուն ցեղախմբերի ճիրաններում հոշոտվող Արևմտյան Հայաստանի տազնապահարույց խնդրին՝ թե՛ Աբովյանի և թե՛ մեր օրերի հայության բաց, միացող վերքին: Գրողն սպասում էր այն երանավետ օրվան, որ «*բոլոր Հայաստան տիրեսցե Ռուսիայ*»⁴: Եվ այս բաղձանքն առկա է նաև «Վերջ Հայաստանի...» վեպի էջերում. Աղասին երագում է մի օր վերաշինված տեսնել ավերված «Հայոց Տունը»: «*Մնանք էս սուրբ հողումը, մեր սուրբ թագավորաց գերեզմանը, մեր սուրբ եկեղեցիքը ազատենք գողի, ավազակի ոտքից*» (266),- ասում է նա:

Ինչպես տեսնում ենք, *վերքն* ստանում է քաղաքական ծանրաբեռնվածություն. այն դառնում է Արևմտյան Հայաստանի չլուծված, Արևելյան Հայաստանի հայության ֆիզիկապես չբնա-

⁴ Տե՛ս **Աբովյան Խաչատուր**, Երկերի լիակ. ժող. ութ հատորով, հ. VI, Երևան, 1955, էջ 26:

- Սարոյան – Սյուրմեյան տիպաբանական քննության արդյունքները, որոնք զգալիորեն ընդլայնում են մեր ավանդական յուրացումները: Հետևությունը մեկն է՝ հեղինակը կարևորում է գրողի ստեղծագործական խորքային կայացումը՝ այն գերադաս դիտելով ազգային արժարժույթների հայտնի փորձից:

«Միջուկի տրոհումը» գրքի ուշարժան հարցադրումներից են նաև Հայոց մեծ եղեռնի գեղարվեստական անդրադարձները Սփյուռքի գրականության մեջ: Արդեն բավական ուսումնասիրված ու գիտական նրբին դիտարկումների ենթարկված այս հիմնախնդիրը ևս գրականագետը քննում է նորովի ու ներհուն հայացքով: Արդարև, Մեծ եղեռնը բոլորիս՝ թե՛ մեր, թե՛ Սփյուռքի Մեծ ցավն է. այն միայն է հավիտենապես... Հայոց գեղարվեստական նորագույն գրականության պատմության մեջ այդ ցավն անվիճելիորեն գերակա է ու առանցքային և դեռ երկար կմնա այդպիսին... Այն, սակայն, ըստ Ս. Դանիելյանի, «*նորագույն ժամանակում խլել է մեզնից ստեղծագործական նոր հետաքրքրությունների ընտրության ընդգրկուն հնարաւորությունը, կարելի է ասել, խլել է սփյուռքահայ գրականությանից նրա զարգացման բազմապիսունությունը, բազմագունությունը, գրական նիւթի ընտրության բացարձակ ազատությունը՝ արուեստագետի մեծության իրական գրաւականը*» (34): Դժվար է չհամաձայնել գրականագետի հետ, առավել ևս, երբ հաջորդում է ծանրակշիռ փաստարկը. սփյուռքահայ գրողներից գրական անվիճելի հաջողության են հասնում հատկապես նրանք, ովքեր «*կարողանում են յաղթահարել «արոբատիկ» աւագանի շիկացած ջերմութիւնը, ովքեր գտնում են գրական-ստեղծագործական նոր ելագծեր, ովքեր նիւթի տեղապտոյտ կորուստներից յետո փնտռոտութիւնը շարունակում են համարել գրողի տիրական առաքելութիւնը*» (34): Եվ դրա ամենամեծ վկան Շահան Շահնուրն է:

Սուրեն Դանիելյանի հեղինակած՝ սփյուռքահայ գրականության պատմության էջերում նշմարվում է ինչ-որ անթաքույց ցավ, մի անհանգստություն, որը համակում է նաև ընթերցողին. դա ոչ միայն թեմատիկ ցավն է, որը բաժին է ընկել մայր գրականության

տրոհված միջուկին, այլև դա ցավ է՝ ծնված բացառիկ սիրուց՝ խորին տազնապը «այլեւս յոգնած Լամանչեցու» ճակատագրի համար: «Ճանաչողական եզրագծին է մօտենում արեւմտահայ գրականութեան՝ գրեթէ երկու դար տեւած հարուստ ճանապարհը,- անհուն թախիծով գրում է գրականության պատմաբանը,- թւում է՝ փակուելու վրա են սփիւռքահայ գրականութեան պատմութեան դարպասները» (35): Ո՛չ, թող մեզ ների մեծահարգ գրագետը, երիցս ո՛չ: Սա միակ առարկությունն է, որ մենք ունենք գիտական հիրավի բարձրարժեք աշխատության նկատմամբ: Խորապէս հասկանալով հեղինակի ոչ անհող տազնապների ակունքները՝ համոզված ենք, սակայն, որ մայր գրականության միջուկն ունակ է շարունակական տրոհումների, և դրանց հայտնության տաղանդավոր հեղինակն իր եռհատորյակը համալրելու է ևս երկուսով...

ԱԼԲԵՐՏ ՄԱԿԱՐՅԱՆ**գրականագետ, բանասիրական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր**

Հեղինակ է «Հակոբ Պարոնյանի «Ազգային ջոջերը»» (1988), «Արևմտահայ գրական դիմանկարը» (2002), «Հակոբ Պարոնյանը ժամանակակիցների հուշերում և վկայություններում» (2004), «Հարություն Ալամդարյան» (2005, 2013), «Թագուհի Շիշմասյան /Օրիորդ Մենիկ/ Երկեր» (2015), «Կրկին Պարոնյանի հետ» (2018) գիտական աշխատությունների և 80-ից ավելի գիտական հոդվածների ու հրապարակումների:

ԱԼԲԵՐՏ ՄԱԿԱՐՅԱՆ
ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԻՐՈՒՅԹՆԵՐՈՒՄ

Հրատ. տնօրեն՝ Արմինե Քոչարյան
Հրատ խմբագիր՝ Արմեն Ավանեսյան
Ձևավորումը՝ Արշալույս Արզումանյանի

Տպագրությունը՝ օֆսեթ
Թուղթը՝ օֆսեթ
Չափսը՝ 60x84 1/16
Ծավալը՝ 18.5 տպ. մամուլ



ARMAV PUBLISHING HOUSE

Ք. Երևան, Բաղրամյան 3, 4-րդ հարկ Yerevan, Baghramyan st. 3, 4th floor
հեռ.՝ +374-10347335, +374-99373130 tel: +374-10347335, +374-99373130
Էլ փոստ՝ armav1815@gmail.com Email: armav1815@gmail.com



ISBN 978-9939-78-120-4



9 789939 781204

